


Արգենտինացի բանաստեղծուհի Ալֆոնսինա Սթորնիին (1892-1938) ճանաչում են ողջ աշխարհում որպես Արգենտինայի գրողների միության հիմնադրի:  
Մահից հետո նա ճանաչվեց Լատինական Ամերիկայի լավագույն բանաստեղծուհիներից մեկը: Նրա հետ նույն պատվին արժանացան չիլիացի Գաբրիելա Միստրալը, ուրուգվայցիներ Դելմիրա Ագուստինը և Խուանա դե Իբարբուրուն: Այս ժողովածուում ընդգրկվել են Սթորնիի՝ տարբեր ժամանակահատվածներում ստեղծված բանաստեղծությունները:  
Ժողովածուն հայերեն թարգմանությամբ ներկայացվում է առաջին անգամ:



□□□□

Ես կարող էի ապրել քո հոգում,  
Ինչպես հեռավոր երկնքում աստղը ճերմակ,  
Սակայն խաբված է երազն իմ. քնքուշ,  
Դու չունես հոգի:

Ես կարող էի ապրել նաև քո սրտում,  
Ինչպես ժայռի վրա շուշանը ձյունների:  
Զհաջողվեց, չստացվեց սերս,  
Դու չունես սիրտ:

Ես երկինք խնդրեցի, դու տվեցիր ինձ հող,  
Ինձ տվեցիր համբույրներ՝ աստղերի փոխարեն,  
Դու հարուստ ես, սակայն, մտածողությամբ՝ աղքատ.

Դու տվեցիր ինձ հող:

Սերն արշալույսով կարող էր ծաղկել,  
Սակայն դարձավ ամպոտ մայրամուտ,  
Չես փոխի ու ետ չես դարձնի.  
Չեն երևում արշալույսները:

Մի հարցրու՝ ինչու է ճակատագրին հակառակ,  
Պսակ եմ հյուսում խաղողի շիվերից:  
Անցել է ժամնակը արերսանքների ու արցունքների,  
Ահա՛ ինչպիսին է ճակատագիրը:

---

□□ <<□□ >>-□

Ինչպես բացատրել. Ինձ թվում է երբեմն,  
թե իմ հոգին նման է քաոսի:  
Տեղավորվում եմ իմ մեջ տիեզերքը համայն  
և ողջ շրջապատույտը լինելության:

Ես-տիեզերքն եմ: Էլեկտրական հոսանքները  
Ինձ տեղափոխում են այլ աշխարհ,  
իսկ այստեղ իմ ճամփաները միայնակ են,  
այստեղ միայն մենակությունն է ինձ հետ:

Եվ եթե կյանքն ինձ մոտենա ժպտալով՝  
Ես առաջվա պես օտար կդառնամ,  
Կփնտրեմ այլը, անհայտը, հոսողը,  
Որին երբեք չեմ հանդիպել:

Օ~ կյանք իմ. Դեպի անկուշտ անսահմանն է  
թռչում իմ ճիչը՝ այրվելով ցանկություններից:  
Իմ արյան մեջ տրոփում են աստղաբույլերը,  
և ծովերը, ձուլվելով իրար, դառնում են օվկիանոս:

Քանի դեռ ապրում եմ աշխարհում  
իմ հոգին ապակե լար է  
արծաթե կիթառի:  
Մի թեթև քամի  
հավերժությունից՝ և կզրնգա նա:

---

**CAMP-FIRE**  
Հունվարյան

գիշերում  
բոց  
դարձավ բունը ծառի:

Մարդկային  
հարյուր գլուխներ,  
կարմիր լեզուներով կրակի,  
շրջապատեցին  
խարույկը:  
Ինչ-որ մեկի  
բաց բերանից  
ձգվեց  
թելը երգի:

Նրան շարունակելով  
մյուս շրթունքները,  
քանդեցին  
մետաքսը  
հանգերի:

Լուսինը  
ուղղահայաց  
լուսավորում էր  
դեմքերը:

Սև  
շրջագիծը լեռնաշղթայի  
գոտևորում էր աշխարհը:

Եվ ինչ-որ մեկի աջը  
կանչում էր,

ոչ թե քո,  
այլ Աստծո,

կողք- կողքի գնալ  
գիշերվա կեսի  
սառցե  
շեղբերի վրայով:

---

□□□□□

Դատարկ երազանք.դու ապրում ես իմ հոգում՝  
ջերմացնելով քիչ-քիչ:

Դողում ես շեմին՝  
Խղճուկ մուրացկանի պես:

Թե հեռանայի քեզնից՝  
ազատության տենչով,  
սիրտս միայնակ  
կմեռներ ցավից:

Դու թաքնվել ես իմ հոգում  
և հսկում ես ձայնն իմ:  
Այս ծանծրալի կյանքին ինձ կապել է  
բարակ թելն այդ:

Ես անդադար մերժում էի քեզ.  
(Խաբիր ուրիշին),  
Բայց դեպի ինձ էիր դառնում կրկին՝  
Կաչուն բռնի նման:

---

ՕՕՕ

Հանգստանում է:  
Մթնշաղը մեռնում է  
խորքում, որտեղ թռչունն է  
անշարժ նստած:

Տխուր ծովերը,  
շրջապատված,  
նրա մեջ  
գլորում են  
ալիքներն իրենց:  
Ցերակային  
տեսարանները  
դանդաղ  
հավվում են նրա մեջ:

Առաջին  
երկչոտ աստղերը  
սգում են  
խուլ հորձանուտը  
անշարժ բիբի:

Նրա մութ  
խորքում  
մարդկանց շարքերը անվերջ  
հոսում են  
ու հոսում:

Հակառակ  
կողմեր են  
գնում,  
խաչվում են,  
նահանջում,  
միաձուլվում են,  
հավում  
առաջին  
շարքերին:

Հառաչում են, քանի որ արևն է ծնվում:  
Հառաչում են, քանի որ արևը մեռնում է:

Ամեն ինչ այնտեղ, խորքում,  
աչքի շրջանակի մեջ,  
ուր  
նստած է թռչունն  
անշարժ:

---

□□□□□□

Եթե մեր սրտերը արձագանքել կարողանային,  
նրանցում կհառնեին ծայները մեռած մարկդանց,  
և հնարավոր է, նրանց մեջ հնչեին դայլայլները  
երգող թռչունների, անտառները լուսավորող:

Չէ որ ըմբռնելով բարությունը օրորոցից  
սիրտը սերտում է կյանքը, միաժամանակ  
փորձելով մահը, փորձելով ողբերգությունը,  
որը սովորել չհասցրինք,  
որը մենության մեջ կխաղանք ու կդիտենք:

Քանի անգամ է նա արտասվել, բաբախել ու երգել,  
պոկվել ու ընկել է, որ դեպի երկնականարը թռչի...  
Մահը սովորելը համարյա անհույս գործ է`  
մենք մահանում ենք ամեն ակնթարթ,  
որ հետո մեկ անգամ  
մեռնենք:

Չհասկանալի

Աստված իմ, տեսա երագուն այնպիսի~ սեր,  
որ աշխարհում ոչ մեկը դեռ չի տեսել,  
միայն անմահության հետ գուցե համեմատվեր  
և պոեզիայի հետ` առանց խոսքերի` հոգու մեջ լցվող:  
Ձմեռը անցավ, բայց առաջվա պես սառում էր  
արյունը,  
և նորից, համբերատար, գարունով փոխարինվեց ձմեռը,  
ես հուսով էի` ամռանն ինձ կայցելի սերը,  
բայց նույնիսկ աշնանը իզուր տանջվում էի  
սպասումով:  
Տե՛ր Աստված, մեջքն իմ մերկացած է,  
և քո մտրակը խիստ անշուկ կընդունի նա,  
որպես անիծված մեղսագործ` ես լսում եմ քո  
ահեղ նախատինքը,  
չէ որ իմ առջև հառնում է հրդեհը  
մայրամուտի:  
Եվ չիրագործված կրքի մեջ միայն ես եմ մեղավոր,  
պոեզիայով տարված` նրան չտեսա, Սինյո՛ր:

---

Չհասկանալի, չհասկանալի անհասկանալի

Աև, փայլուն վարսերով գլուխը խոնարհելով,  
Ոչ երտասարդ գեղեցիկ կինը  
Ծնկեց, և խաչված Քրիստոսը  
Բարձրից խաչի  
Նայեց նրան` ցավակցելով:  
Իսկ սրտի տակ` երեխան էր. Նա շուտով զավակ էր ունենալու:  
Եվ այնպիսի~ մեծ թախիծ կար նրա աչքերի խորքում:

Եվ արտասվելով` հավեց նա  
Արյունոտված ոտքերին Քրիստոսի.  
\_Օ~, Տե՛ր Աստված, միայն աղջիկ չծնվի...

Չհասկանալի անհասկանալի

Տեսադաշտիցս կորցնելով քեզ`  
նորից քեզ հանդիպեցի  
Ֆլորիդայի մայրուղու անկյունում  
և, ձեռնոցներս տրորելով ձեռքումս,

դիմեցի քմծիծաղով.  
(որքան ցրված, որքան մռայլ էիր դու)  
և հարցրեցի. <<Ասացե՛ք ինձ խնդրեմ,  
ինչու՞ են ձեր ատամները դեղին>>:

Դու նայեցիր լուռ կշտամբանքով,  
և շրջվեցիր՝ ձեռքով պատահաբար  
անձանոթ կնոջ դիպչելով...

Իսկ հետո քաղաքի թոհուրոհում  
ես ճանապարհեցի քո վերարկուն,  
գլխարկը... հետքը... կետը... ոչինչ...

---

□□□□□□

Երբ ես կմեռնեմ, լուրը այդ մասին  
Դեպի անսահմանը կթռչի իր հին ճանապարհով,  
Եվ շեմից շեմ կսահի  
Բոլոր հաստատություններով,  
Եվ կսկսեն փնտրել անունն իմ գրոքերում հաստավոր:  
Այնտեղ, հեռավոր գյուղակում,  
Որ ննջում է սարերում, արևի տակ,  
Հին ծխական գրքի մեջ օտար մի ձեռք  
Գիծ կքաշի՝ գտնելով անունը իմ:

---

□□ □□□□□□ □□

Ետ գալ դեպի այն, ինչ նախաստեղծ է,  
լինել խոտի, նորահաս ծաղիկների պես, չխորհել,  
բայց հասնելով գեղեցկության ակունքներին՝  
խմել հյութը և չկոտրել զրգացող գավաթը:

□□ □□□□□ □□□□□□□□

Որտե՞ղ ես, իմ ընկեր.  
որ ասացիր ինձ՝  
ճերմակ մորուքդ շոյելով.  
<< Ջգու՛յշ եղիր, փոքրի՛կս, նայի՛ր,  
Սիրտդ պահպանիր>>:

Գարուններն անցնում են, և միայն անձրևներն են  
սպասում աշնան ճանապարհին...  
Ջգու՛յշ եղիր. տե՛ս, որ քեզ  
չայրի հրդեհը>>:

Ես վախվորած լսում էի նրան՝  
անսովոր տազնապից դողալով,  
<<Թռչունները երգում են- պատասխանեցի.-  
Գետը զրգում է,-ասացի>>:  
Ճակատիս վրա, փոթորիկների հայելում,  
հիշում եմ նրա ափերը:  
Նա խոնարհվեց դեպի ինձ՝ շշնջալով,  
<<Խեղճ աղջիկ...>>